

մի՛ ընդհանրացնէք, վճիռներ արձակելու համար, որոնք ամէն օր հերքուեցան այդ ընդարձակ կայսրութեան մէջ: Թուրքերուն վրայ խօսելու արտօնուած ցեղը հայն է միայն, որ շատ մը հասարակաց կողմեր ունի անոնց հետ, կողմեր՝ որոնք արիւնէն գալուն չափ կու գան հողէն, հովէն, ջուրէն, երկինքէն: Այդ է պատճառը, որ եւրոպացիներուն, ամերիկացիներուն տուած թուրքը ապապրուած ապրանք է: Մենք՝ հայերս միայն կը ճանչնանք թուրքը, արեան ճանաչումով մը: Յետոյ այդ յարաբերութիւնը -հայու եւ թուրքի- տրուած է դարձեալ տարբեր մեր ժողովուրդին երկու հատուածներուն համար: Սփիւռքի հայութեան մէջ անհկա, այդ հարցը դեռ չապականուած զգայնութիւն մըն է, շատ խոր բռնուած ըլլալուն մեր ներսը: Արեւելահայերը զայն կը զգան ուրիշ: Այդ է պատճառը, որ Մելիքխանեանց Մաթիկը թուրքը հարազատօրէն զգալու համար կարիք ունենար հռետորութեան, ըսել կ'ուզեմ՝ ինքզինքը փչելու, նեղելու, բռնադատելու, իր ջիղերուն ինկած զգայնութիւնները տարօրէն աճեցնելու, նմանելով քիչիկ մը Տոն Քիշոտ ասպետին, որ իր եռանդին մէջ մնալու երջանկութեան սիրոյն՝ ոչ-խարները կը հանէր դէպի առիւծութիւն: Դիտեցի, որ տօգոյն էին այդ զգայնութիւնները, քանի որ մոռցած էին իր երկրացիները թուրքին իմաստը: Ասիկա զարմանալի կերպով պիտի հաստատէի 1918ին, երբ Պոլսէն փախայ գերման սպայի տարազով Պուլկարիա: Երիտասարդ սպայ մը, որ պաշտօն ունէր փախստականները հսկողութեան տակ պահելու, կը զարմանար, թէ ինչպէ՛ս ինծի պէս երիտասարդ մը ստիպուած էր փախչիլ Պոլսէն, ծանօթ անոնց լեզուին, բարքերուն, գրականութեան: Ահաւոր էր իր միամտութիւնը, աւելի քան Քէյզերլինկ կոմսինը: Անշուշտ բարձրագոյն միջամտութիւն մը կ'արգիլէր փախստականներուն թուրքերուն յանձնուիլը: Խօսեցայ իրեն 915ի սպանդէն ու վարձատրուեցայ իբր անգլիական փրոփականտի չափազանցութիւն: Պուլկար սպան չէր կրնար ըմբռնել, որ անմեղ, մա'նաւանդ անգէն